00 OCT 2014

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
յայտնեալներդ կրնասում է, ենթարկում փոփոխութիւն և չը տպուիլիքդ (երեք տերից պակաս) չէ վերադարձնում։
Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի և ուրբաթ առաւ. ժ. 11—12։

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ
ԹԻՖԼԻՍ, Օլգինսկայա փ. տ. № 31 – 33 (Զինուորական նահանգապետի դասարանի և Օլգինսկի ինստիտուտի հանդէպ)։ բաց է ամէն օր (բացի կիրակի և տօն օրերից), առ. 10 ժ. մինչև 2½-ը կէս օրից յետոյ։ Հասցէն՝ ТИФЛИСЪ, ред. ТАРАЗЪ Rédaction du Journal TARAZ. Caucase. Tiflis.
Տելեֆոն № 282։

# ՏԱՐԱԶ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Ադրիբ 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.) Ադրիբ-Տարազ, միասին 10 ր. (արտասահման 18 ր.) Տարազ ամիսը 50 կ. առանձին №-ը երկու տերից 40 կ., մի տերից 20 կ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ընդունում են ամէն յեղուով, Տարազի երեսի մի հինգերորդական տողը առաջին երես 40 կոպ. վերջին երես 25 կ. մանրատառ (պետիտ)։ Պրոպորցիոնալ աստիճանից կրկնակի։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւններն առանձին համաձայնութիւնամբ։

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական
պատկերազարդ շաբաթաթերթ. լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը։

№ 8 Կիրակի. փետրուարի 22 Տասնեհինգերորդ տարի 1904

Շարունակում է 1904 թ. ԱՂԲԻՒՐ ամսագ. (տ. XXII տ.) և ՏԱՐԱԶ լրագր. (տ. XV տ.) բաժանորդագրութիւնը

ԳՐԻՄԻԱՆԵՐԸ են՝ 1) Ս. ՍԱՀԱԿ, 2) Ս. ՄԵՍՐՈՊ, 3) ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ, և 4) ԶՆԱՇԽԱՐՀԻԿ, երեքտրօ-միքանկար։

## ՍԻՐԵՑԵԱԼ ԳՈՐՈՎԱԳՈՒԹ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՑՍՐՈՒՀԻ

### Ալէքսանդրա Ֆէօդրովնա

Ես կը լինէի յաւէտ երջանիկ
Էլ չէի տանջուիլ հոգս ու ցաւերից
Թէ կարենայի դժբաղդ հայրենիք—
Մի կաթիլ արցունք արթել քո աչքից։

Էլեգիզ.

Եւ յաւէտ երջանիկ լինելու համար, հայրենիքի արցունք արթելու օժիտը բերաւ Ռուսաստանին մեր սիրեցեալ *Հարս Թագուհի Կայսերուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան*։

Մարդկային արժանապատուութիւնը ստորացնող միջնդ այժմ բարեգործութեան ձեր հիմնովին փոփոխութեան ենթարկեց և հաստատեց *Նա* մարդուն վայել ապաստարան՝ *աշխատանքի տունը*, որ կարն ժամանակում շատ ընդարձակ նիւղաւորուեց սեր ընտանեսարած Կայսրութեան մէջ։

Երիտասարդ, կենսունակ *Թագուհի Կայսերուհին* ոչ թէ մի պատան հացը, ցնցոտիներ բաժանելը համարեց ընկածին, խեղճին օգնութիւն, այլ այդ ընկածին, հաղցածին աշխատանք տալը և իր սեպհական ոյժերով հաստատ հողի վրայ կանգնեցրելը։ Եւ արդեօ՞ք կայ տանից աւելի մեծ և բարի գործ, որ կարողանայ մարդու արցունքը ցամաքացնել։

Մեր սիրեցեալ *Թագուհի Կայսերուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան* հովանաւորում է և գեղարուեստ ու *Խիմ* էլ սիրահար է *գեղեցիկ արուեստին*։ *Օգոստափառ Կայսրուհու* լուսասիպ նկարները եւրոպական շատ ցուցահանդէսներում գրաւել են մեծ ուշադրութիւն և արժանացել պատուաւոր մրցանակների։

*Նորին Մեծութիւն Թագուհի Կայսերուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնա* այնքան էլ կողմնակից չէ կնոջ բարձրագոյն մասնագիտական ուսման։ Կնոջ կոչումը *Նա* համարում է՝ *լինել գորովագութ մայր, անմեղուհի դաստիարակ զաւակների, աշխատասէր ընկեր ամուսնուն, մխիթարիչ հրեշտակ խեղճին*։

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՑՍՐՈՒՀԻ
Ալէքսանդրա Ֆէօդորովնա
Հիմնարկիր աշխատանքի տնեի Ռուսաստանում

Կնոջ մասնագիտութիւնը *Օգոստափառ Կայսերուհին* համարում է *գեղեցիկ արուեստները*։

Կողմնակից չէ *Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան* և փարքամ հագնելուն. ով երջանկութիւն է ունեցել մօտիկից հանդիպելու *Օգոստափառ Կայսրուհու* ներկայութիւնից, նա կը խոստովանի, որ *Նորին Մեծութիւնը* վեհաշուք է ոչ իր արտաքին պանուճանքներով. *Նրա* աչքերը ցոլում են իմաստութեամբ լի հեզութիւնով, շարժածքները չքնաղ են և շքեղ։

Դիտեցէք հէնց *Նորին Մեծութեան* այս լուսանկարը, ուզէսգի *Նա* ձեզ խօսի և հաւատացնէ, որ փարքամ հագուստը, սքիմնս սիրտը չէ կնոջ կոչումը։

Ն. Էս

### ԱՆՁՐԵՒԻՑ ՅԵՏՈՑ.

Ինչպէս լուսինը երկնակամարում
Անձրեւից յետոյ փայլում է պայծառ,
Ինչպէս աստղերը պարզուած երեւում
Ցողին են տալիս էլ աւել կայտառ,

Այնպէս էլ սիրտս արցունքից յետոյ
Երգում է, զուարթ ճնշող ցաւերից,
Եւ իմ խոհերը եռանդուն շեշտով
Զգում են երեր՝ բեւ առած նորից...

Ինձ հանգիստ բերող, արցունքս թանգալից,
Լիեալ ժամերին արի՛ ու կախի՛ր
Դու իմ աչերից։

Յակոբ Յակոբեան.

digitised by A.R.A.R.@

## ՎԱԳՆԵՐ

Վիլհելմ Ռիխարդ Վագներ ծնուել է Լայպցիգում (1813, մայիս 22), վախճանուել է Վենետիկում (1883, փետր. 13) և թաղուել է Բայրոյթում, իր ամառանոցի (Վանֆրիդի) մոտ (1883 փետրուար 18)։ Նա մոտ վեց ամսական էր, հայրը (Լայպցիգի ոստիկանութեան տեսնողը) մեռաւ։ Մայրն ամուսնացաւ երկրորդ անգամ (1815) Լուդվիգ Գայերի հետ. նա դերասան, յայտնի նկարիչ և կատակերգակ էր։ Հինգ տարի յետոյ երկրորդ ամուսինն էլ մեռաւ (1820)։ Մանուկ Վագներն աճում ու զարգանում էր մօր հսկողութեան տակ Դրեզդենում. Նորա տաղանդն սկսաւ պտղաբերել, երբ մտաւ նոյն քաղաքի Ֆրոյց դպրոցը (1833—1828)։ Նա սկզբում աւելի հակումն ունէր բանաստեղծ դառնալու, քան երաժիշտ։ Շեքսպիրի ողբերգութիւնները նորաբղխող մտքին հանգիստ չէին տալիս. ինքն էլ սկսաւ և նոյն ոճով մի ողբերգութիւն գրեց։ Բայց երբ մայրը Նորան տարաւ Լայպցիգ, բանաստեղծական փորձիկ մուսան տեղի տուաւ երաժշտականին։ Այստեղ Նիկոլայ գիմնազիան աւարտելուց յետոյ, սկսաւ Գոթֆրիդ Միլլերից դաշնամուր նուագել սովորել. իսկ երբ փիլիսոփայութեան ուսանող գրեցաւ համալսարանում, կանոնաւորապէս ուշք դարձրեց երաժշտութեան և Վայնլինգի մօտ աւարտեց գեղարուեստական երաժշտութիւնը։ Նորա երաժշտական առաջին երկերը շատ աննշան են, բայց շատ էլ ուսանելի են նոցա համար, որոնք մեծ Վագների մեծ հանճարի մեծ ստեղծագործութեան ծանօթ են. նոցա մէջ պարզ երևում են, թէ ինչպէս հասունացել ու զարգացել են Նորա բազմակողմանի ձիրքերն ու մտքերը։

Վագներ առաջին անգամ ոտք կոխեց գործի ասպարէզը 1834 թուին, երբ Նորան հրաւիրեցին Մագդեբուրգի քաղաքային երաժշտարանը (Operhhaus) ղեկավարելու։ Այստեղ ամուսնացաւ դերասանուհի Միննա Պլանների հետ։ Շատ չանցաւ, խումբը լուծուեցաւ (1836). Վագներ իր կնոջ հետ, նոյն պաշտօնով, տեղափոխուեցաւ Քէօնիկսբերգ. բայց Նորա բաղդից, նոյն տարին, թատրոնի վարչութիւնը մնանկացաւ։ 1837 թուին աշնան գնաց Ռիգա և Նորաբաց երաժշտարանի վարիչ եղաւ։ Շարունակ առաջ ձգտող պատանի գեղարուեստագէտը 1839-ին թողեց Ռիգան, և կնոջ հետ առաջ, Լոնդոնի վրայով Փարիզ գնաց։ Փարիզում Նորա կեանքն այն աստիճան դառնացաւ, որ ակամայ կարիքին խոնարհելով, ծառայեց երաժշտական երկերի հրատարակիչներին. յօրինեց ամեն տեսակ ֆրանսերէն երգեր, թարգմանեց օպերաներ և այլն։ Փարիզում վարած դժուն ու անպատիւ կեանքին (1839—1842) վերջ տուաւ Վագներ Հալեվիի «Կիպրոսի թագուհին» դաշնամուրի համար փոխադրելուց յետոյ։ Փարիզի կեանքը որքան տառապալից, նոյնքան էլ պտղալից եղաւ Նորա համար։ Փարիզի դրամայական երաժշտութիւնը լսեց և այն՝ կատարելատիպ երգիչ դերասաններից, այնքան ճիշտ, որքան կարելի էր արտայայտել. այդ բոլորն ուսումնասիրեց ուշի ուշով։ Թէև օրական պարէնն հայթայթելու համար ակամայ զբաղուում էր շատ մանր մունր բաներով, այնուամենայնիւ իր ժամանակն արդիւնաւորեց. գրեց «Ֆաուստ»-նախաբանը»-ը («Faust Ouvertüre»). Ռիգայում սկսած «Ռիենցի»-ն («Rienzi») վերջացրեց և «Թռչող-հոլանդացի»-ի («Fliegender Holländer») բանաստեղծութիւնը, երգն ու նուագը յօրինեց. Ռիգայից Լոնդոն արած ալէկոծ ճանապարհորդութեան տպաւորութեան տակ «Ռիենցի»-ն Դրեզդենում, իսկ «Թռչող հոլանդացի»-ն, հրաշակաւոր երաժիշտ Մայերբերի միջնորդութեամբ, Բերլինում ընդունեցին ներկայացնելու։ Հայրենիք վերադարձի ճանապարհածախսը հայթայթեց մասամբ Հալեվիի վերև յիշած երկից ստացած վարձատրութիւնից. մասամբ էլ «Թռչող հոլանդացի»-ից. որի բանաստեղծութեան ընագիրը ծախել էր Փարիզի «Մեծ երաժշտարան»-ին. շուտով Պաուլ Ֆուշէն Ֆրանսերէնի փոխադրեց. իսկ Դիշը մի Նոր երաժշտութիւն յօրինեց և ներկայացրին «Le Vaisseau fantôme» անունով։ Վագներ հրաժեշտ տուաւ Փարիզի արկածալի կեանքին և Դերմանիա դարձաւ (1842)։ Հայրենիքում դիմաւորեց Նորան անդրանիկ փառքը։

Վագներ.

«Ռիենցի»-ն (Cola Rienzi, հռոմայեցւոց ցեղապետ) առաջին անգամ ներկայացրին Դրեզդենում (1842 հոկտեմբեր 20)։ Այնպիսի սիրալիր ընդունելութիւն գտաւ «Ռիենցի»-ն, որ Վագներ սիրտ առաւ և Բերլինից անմիջապէս յետ պահանջեց «Թռչող հոլանդացի»-ն, որ նոյնպէս առաջին անգամ ներկայացրին Դրեզդենում (1843 յունուարի 2)։ Այս ժամանակներում վախճանուեցաւ Դրեզդենի երաժշտարանի վարիչը Բասարելլին. Վագների ընկեր Վիլհելմ Ֆելայշերը (նոյն երաժշտարանի երգեցիկ խմբի վարիչ) միջնորդեց և Նորա տեղ Վագներին նշանակել տուաւ։ «Ռիենցի» Մայերբերի ոճով և Փարիզի ճաշակով էր կազմած, բայց «Թռչող հոլանդացի»-ն բոլորին կախարդեց. այս երկով երևան եկաւ մի «նոր» Վագներ, գերմանացի Վագներ, որ գերման ազգային երաժշտութեան հոյակապ շէնքը բարձրացրեց։ «Թռչող հոլանդացի»-ն երկու կուսակցութիւն առաջ բերաւ «Վագներեան» և «Հակավագներեան»։ Դաշնակների (Accorde) գործածութեան անհամաձայնութիւնը, կիսորդ (Chromatique) երկէջների յաճախ և ազատ կիրառութիւնը, գրուածքի, ոճի և մտքի միութիւնը և այլն, մի մի հիմնաքար էին մի բանակ մանրազէտ քննադատների համար և զօրաւոր փաստ Վագների դէմ գինուելու։ ուստի սկսաւ մի պայքար Նորա գերբնական գաղափարների, յեղափոխիչ մտքերի և հակառակ կուսակցութեան մէջ։

Անընկճելի և հաստատուն կամքը տոկուն կերպով մաքառման ասպարէզն եկաւ և ցոյց տուաւ մի այնպիսի գործունէութիւն, որ եռում էր Նորա ամբողջ կեանքի ընթացքում։ Նա այնքան նուրբ ու զօրեղ կերպով պատկերացրեց Գլուքի երկերը, որ շատ շուտով հռչակուեցաւ իբրև վարպետ վարիչ։ Հակառակ կուսակցութեան բազմութիւնը վարիչ։ Հակառակ կուսակցութեան բազմութիւնը Նորան չը վնասեցրեց, այլ ուժ տուաւ, Նորան եռանդ Նորան չը վնասեցրեց, այլ ուժ տուաւ, Նորան եռանդ ներշնչեց և մեծ երաժշտագետը յեղափոխիչ, զօրաւոր Նուագներն ու երգերն առաջ տարաւ և առաջ մղեց իր դաշնակների ու եղանակների հուժկու, բայց կենարար ալիքներով նոյն իսկ նոցա, որոնք չէին ոգևորում Նրանով։ Էլի Դրեզդենում, առաջին անգամ, բեմ հանեց Վագներ իր անմահ երկերից մէկն էլ՝ «Թանհոյզեր»-ը կամ «երգիչների մրցումը Վարբուրգում» (1845 հոկտեմբերի 19) («Tannhäuser, oder Jängerkrieg auf der Wartburg»)։ Այս ժամանակներում Վագներ գրում էր նոյնպէս «Լոհենգրին»-ի («Lohengrin»), «Մեյստերզինգեր»-ի («Meistersinger») և նոյն իսկ «Նիբելունգեն»-ի («Nibelungen») բանաստեղծութիւնը։ Վագներ նախարարութեան երկայացրեց «Սամսոնիայի բազաուորութեան ազգային բաներին ծրագիրը», բայց ընդունելութիւն չը գտաւ, որովհետև 1849-ի Մայիսեան խառնակութիւններին մասնակցել էր. ուստի փախուստ տուաւ իր կեանքի ընկեր Լիստի հոյակաւոր երաժշտի (Liszt) մոտ՝ Վայմար, անցաւ Փարիզ և ապա շուտով դարձաւ Ցիւրիխ, ուր մնաց շատ տարիներ։

«Լոհենգրին»-ը, որ պատրաստ էր (1847), Լիստը ներկայացրեց տուաւ Վայմարում (1850, օգոստոս 28) առաջին անգամ, որից յետոյ ընդունելութիւն գտաւ «Թանհոյզեր»-ը շատ տեղերում և աւելի յաճախ բեմ ելաւ (1853)։ Այս թուին վերջացրեց Վագներ «Նիբելունգեն»-ը, բայց մնաց դեռ երկար ժամանակ առանց ներկայացման։ Լոնդոնի երաժշտասէրների ընկերութիւնը Վագներին հրաւիրեց (1855) իրենց Նուագահանդէսները ղեկավարելու։ 1860 թուին գնաց Փարիզ և Բրիւսել իր երկերը տարածելու համար, բայց երեք Նուագահանդէսը նոտեց 10,000 ֆրանք. իսկ երբ 1861-ին կայսեր հրամանով Փարիզի մեծ երաժշտարանում ներկայացրին «Թանհոյզեր»-ն առաջին, երկրորդ և երրորդ անգամ, մի այնպիսի ծաղր, ծիծաղ ու քրքիջ արաւ հասարակութիւնը, որ Վագներ յետ առաւ և ընդհատեց ներկայացման շարքը։ Մեծ վարպետը Նորից դարձաւ իր հայրենիքը՝ նախ Քարլսրուհէ, ապա Վիեննա։

Երկու քաղաքներումն էլ ներկայացրին «Թրիստան և Իզոլդի»-ն («Tristan und Izolde»)։ Այս երկով սկսում է Վագների երաժշտական ստեղծագործութեան երրորդ շրջանը։ (Այս շրջանում Վագներ եղանակը վեր է ածում ասերգի (Recitativ) բարձր աստիճանին, իսկ երաժշտական գաղափարները տալիս է նուագարաններին)։ 1862 թուին անցկացրեց Բիլրիխում և երաժշտեց «Մեյստերզինգեր»-ը, որ մի փոքր ընդհատուեցաւ Գրազում և Գեսերբուրգում նուագահանդէսներ տալու պատճառով, բայց 1863-ին դարձաւ Վիեննա և առաջ տարաւ։ Անդուլ երաժշտին սկսաւ կամաց կամաց յուսահատութիւն պաշարել, բայց տեսական չեղաւ։ Բաւարիայի Նորապսակ թագաւորը, Լուդվիգ Բ. Վագներին հրաւիրեց Մունխեն և Շթարնբերգեան լճակի մոտ մի ամառանոց նուիրեց։ Վագները միջնորդեց և իր աշակերտին, Բիւլոուին կանչել տուաւ իրբև արքունի դաշնակահար (1865),

digitised by A.R.A.R.@

արքունի երաժշտանոցի և արքունի երաժշտարանի վարիչ (1865)։ Բիլլո-ի կինը (Լիստի աղջիկը) բաժանեցաւ իր ամուսնուց 1869-ին և Վագներին առաւ, որ լուծել էր իր և կնոջ պակը։ «Թրիստան եւ Իզոլդա»-ն առաջին անգամ ներկայացրին Միւնխենում (1865)։ Վագներ Թոդեց Միւնխենը և ընակութիւնը հաստատեց Թրիբշենում (Լուցերնի մօտ)։ այստեղ վերջացրեց «Նիւրնբերգի երգչապետներ»-ն (Die Meistersinger von Nürnberg) և «Նիբելունգներ»-ն առաջ տարաւ։

«Նիւրնբերգի երգչապետներ»-ն առաջին անգամ բեմ եան Միւնխենում մեծ յաջողութեամբ (1868, յունիս 21)։ Վերջապէս Վագների երիտասարդութեան երազն էլ կատարուեցաւ. մեծ քառակի (Tetralogie) երաժշտութիւնն էլ աւարտեց. այսպիսով «Նիբելունգների մատանին» (եռակի՝ «Վալքիւրէ» («Walküre»), «Զիգֆրիդ» («Siegfried»), «Գեօթթերդամմերունգ» («Götterdämmerung») և նախերգանք «Բայնգոլդ» («Rheingold») ամբողջացաւ։ «Բայնգոլդ»-ը ներկայացրին առաջին անգամ Միւնխենում, մեծ ոգևորութեամբ ընդունեցաւ (1869, սեպտեմբեր 22)։ Վագներ մտածում էր շատ վաղուց մի ազգային թատրոն (երաժշտարան) հիմնել Բայրէյթում. 1871-ին գնաց այնտեղ, 1872-ի հոգեգալստին մեծ բազմութեան

Տ. Հրաչիայ.

ներկայութեամբ, իր երաժշտութեան բարեկամների (եւ ջշնամիների) եռանդուն աջակցութեամբ, դրին Բայրէյթում ազգային հանդիսարանի (Festspielhaus) հիմնաքարը։ Զուտ գեղարուեստագէտների խումբն էլ նւագեց Բեթհովենի իններորդ Սիմֆոնին վարպետօրէն (Հանս Ռիխթերն էլ Մեքկանար էր) և հանդէսը փակեց։ «Վագներեան ընկերութիւն»-ը ժրաջան կերպով աշխատեց և հաւաքեց 900,000 մարք և 1877-ի օգոստոսի 13—30 ներկայացրին «Նիբելունգների մատանին» ամբողջապէս։ Ներկայ էին Վիլհէլմ Ա. կայսրը, Լուդովիգ Բ. թագաւորը և մի խումբ բազմութիւն բոլոր ազգերի գեղարուեստագէտներից։ Ապա սկսեցին Գերմանիայի մայրաքաղաքներն իրար ետևից ներկայացնել (Լայպցիգ, Միւնխէն, Վիեննա, Համբուրգ, Շվերին, Վայմար, Գէօրլիցի, Բերլին), Վագների վերջին փառաւոր երկն է «Պարզիֆալ» («Parsifal»), որ առաջին անգամ ներկայացրին Բայրէյթում. կառավարում էր ինքը Վագները (1882, յուլիս 26)։ «Պարզիֆալ»-ը ներկայացնում են միայն



Ց. Պարոնեան.

Բայրէյթում, ուրիշ երաժշտարաններն իրաւունք չունեն ներկայացնելու։ կտորներ միայն նւագում են զանազան նւագահանդէսներում։

Վագներ ժԹ. դարում ամենարարձր դրամատիկ երաժիշտ է։ Վագներ բոլոր դարերի ամենամփոփ և կենդրոնացած մտածող երաժիշտներիցն է։ Վագները շատ հանճարեղ և բարձրաթռիչ բանաստեղծ է։ Վագները երաժիշտ-բանաստեղծ է։ Վագներն իրրև երաժիշտ ունեցաւ զարգացման մի այնպիսի ընթացք, որ բաժանւում է միմեանցից խիստ զանազան շրջանների. ուսման շրջան, երբ ինքնուրոյն և նոր բան չէ ասել (մինչեւ «Ռիենցիին» էլ հետը), թարմ և զարթ ստեղծագործութեան շրջան ուր օտար գիծ չը կայ, ոչ մի օտար ազդեցութիւն չը կայ («Հոլանդացի», «Թանհոյզեր», «Լոհենգրին», և լուրջ ու ծանրակշիռ շրջան, ուր իւր յեղափոխիչ գաղափարն են հասունանում և յաղթում («Թրիստան», «Երգչապետներ», «Նիբելունգներ»)։ Վագներն արաւ այն ինչ կաժենում էր. չէ կարելի նորա երկերից երաժշտութիւնը պոկել ու այնպէս նւագել (մանաւանդ երրորդ շրջանում), որովհետև բանաստեղծութիւնից և պատկերից անբաժան է. նորա երկի մէջ միասին և համերաշխ են գործում սիրտ, միտք, աչք, որոնք անբաժան միութիւն են ներկայացնում։ Վագներ չէ գրում նորա համար, որ վերացնէ, բարձրացնէ զգայականից վերինը, երկրից երկինքը։

Վագներ Գերմանիային ազգային երաժշտութիւն տուաւ, իսկ օտարներին դաս։

**Նոմիտաս Վարդապետ.**

Ս. Էջմիածին.

## Ց. ՊԱՐՈՆԵԱՆԻ ՄԻ ՆԱՄԱԿԸ

Կ. ՊՕԼԻՍ, 17 ապրիլ 1890 թ.

Մեծարգոյ պ. Տիգրան Նազարեան

Գ. Նշան Պէրպէրեանէ կիմանամ թէ Տարազի խմբագրութեան մասնակցութիւնս կը խնդէք։ Սիրով կը մասնակցիմ, բայց ցաւդ չը գիտեմ թէ ինչ է Տարազի գիրքը։ որպէս զի գրէի ձեզ գրելիք տեղերս քանակութիւնը և առաջարկէի զայմանները։ Ուստի կը խնդրեմ որ հաճիք պատասխանել ինձ թէ ինչ տեսակ յօդուած կուզէք և քանի քանի պէտք է գրել՝ յօդուածի մը համար քառն բարի առնելու համար։ Մեր պայմանն է վճարման մասին—Քերթուածի տարօրինակ թիւ—երբեք յօդուածի վարձը կանխիկ տալու երեք ամիսը անգամ մը. բազմամեայ փորձառութիւնն հաստատած է այս կանոնն որ արդարև այլանդակ է քիչ մը։ Եթէ պայմաններս ընդունելի չլան՝ կարող էք գ. Պէրպէրեանի միջոցաւ իմացնել ինձ։ Չը մոռանամ յայտնել թէ յօդուածներուս ներքև զոնա ստորագրի, եթէ ուզենամ, մասնաւոր տեսակով մը հրատարակելու իրաւունքն ինձ կը վերապահեմ, անուն չը գնելով սուտ անուն պիտի գործածեմ։

**Գ. Գ. Պարոնեան**

Այս նամակին համառօտութեան պատասխան ուղարկած էր Պարոնեանին 15/27 մայիսի 1890 թ. սակայն հանձնուեց, մեր անգուգական երգիծաբանը, արդէն հիւանդացել էր եւ այլեւս գրել սկսուել էր։

**Խմբ.**

## ԻՄԱՍՏԱՍԻՑ ՄՏԵՐՈՒ

Երբէք մի ծիծաղէք այն մարդկանց վրայ, որոնք լալիս են, բայց լացէք երբեմն այնպիսիների վրայ, որոնք ծիծաղում են։

Մարդկային հոգու ամենաբարձր ընդունակութիւնը բարութիւնն է։

Որքան երկար եմ մտածում այդ հարցի մասին, այնքան աւելի է իմ առաջ պարզւում, որ մարդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կալանաւոր։

Կալանաւորը ամենամեծ ջանքերով մագլցում է պատի վրայով դէպի բարձր, վանդակապատ լուսամուտը։ Պատուհանի միջով նա տեսնում է և հեռաւոր դաշտերը, և անտառները, և բլուրները, և քաղաքը, և ճանապարհները, որոնցով նա մի ժամանակ թափառել է և նորից պիտի թափառէ հէնց այն օրից, երբ նրան ազատութիւն տրւի։ Նա ագահութեամբ նայում է այդ բոլորին. ագահութեամբ ներշնչում է թարմ օդը, գմայլւում է արեգակով, ջերմութեամբ։

Այդպէս է և մարդը. աստղագիտութիւնը, քիմիան, երկրաբանութիւնը, ժամանակի, տարածութեան չափերը, բոլոր գիտերը, բոլոր գիտութիւնները ասում են մեզ շրջապատող անհունութեան մասին, բոլոր գիտութիւնները, գեղարուեստի բոլոր ճիւղերը, մաթեմատիկան, պօէզիան—այդ բոլորը օգնում են մեզ տեսնելու մեր բանտի վանդակապատ լուսամուտի միջով։ Կալանաւորը չի կասկածում, որ հէնց այն օրը, երբ կը բացուն իր բանտի դռները, նա նորից կը լինի այդ դաշտերում և անտառներում, չի կասկածում, որովհետև նա այդ բոլորը տեսնում է և գիտէ, որ այդ բոլորը գոյութիւն ունի։

Ն ի չ ե ի.

Արդ, ինչպէս կարող է մարդ կասկածանքով վերաբերուել, որ իր բանտի դռների մօտ նրան յաւիտենականութիւն է սպասում։

—

Մահը միենոյն է թէ զգեստի փոփոխութիւնէ. հոգին, որ առաջ փաթաթուած էր խաւարի մէջ, հիմա լուսով է փաթաթուում։

Ինչպէս կարող են կաթոլիկները ցանկալ, որ հանդերձեալ կեանքում իրանց առաջուայ տեսքով լինեն։ Դա միենոյն է, թէ գնալ մի մեծ տօնի մասնակցելու՝ հին, մաշուած շորերով։

—

Այն անձնաւորութիւնը, որին մատչելի են պարտքի, իրաւունքի, ազնուութեան և արդարութեան գաղափարները, ով մոռանում է իրան և ապրում է ուրիշների համար, ով իր սրտի մէջից լսում է ամբողջ մարդկութեան սրտի բաբախումը, ով իրան եղբայր է համարում ամեն մի թշուառի, ամեն մի թոյլի, անարգուածի, վիրաւորուածի, սարկի, յանցաւորի, ով աշխատում է իր մերձաւորի համար, տանջւում է նրա տանջանքներով, լալիս է



Մ ա ք ս իմ Գ օ ր կ ի.

նրա արցունքներով, ով զուր տեղը մի ճանճի անգամ չի սպանում. որին մատչելի են ճշմարտութեան և գեղեցկութեան գաղափարները, ով յափշտակւում է քնքոյշ մելոդիան, գմայլւում է ծաղիկով, կնոջով, բնութեամբ, ով խոնարհւում է հանճարի առաջ, ով սիրում է և իր սիրոյ մէջ զգում է յաւիտենականութիւն, ով իր համար իդէալ է ստեղծում և իր ամբողջ կեանքում ծառայում է նրան,—նա, որքան էլ խօսքերով բացասէ, իր հոգու խորքերում հաւատում է Աստծուն։

Թարգմ. **Սալ.**

digitised by A.R.A.R.@